ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 17.06.2019թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ
ՔՆՆՈՂ ԱՆՁԻ
թիվ ՍՑ-LO-2019/44

Նախագահությամբ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի
Քարտուղարությամբ՝ Լ. Անանիկյանի

Մասնակցությամբ՝
«Վիէյչ գրուպ» ՍՊ և «Արխանգելսկիյ լես» ՍՊ ընկերությունների (համատեղ գործունեության պայմանագիր) ներկայացուցիչ՝ Ա. Սարգսյանի

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ՝ նաև Բողոքներ քննող անձ)՝ ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից 17.05.2019թ. թիվ 26/26-1/8191-2019 գրությամբ «Վիէյչ գրուպ» ՍՊ և «Արխանգելսկիյ լես» ՍՊ ընկերություններին (համատեղ գործունեության պայմանագիր) (այսուհետ՝ երկուսը միասին նաև Մասնակից) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը,

Պ Ա Ր Զ Ե Ց

1. **<u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>**

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ պաշտպանության նախարարության 15.05.2019թ. թիվ ՊՆ/02/549-2019 գրության հիման վրա, 17.05.2019թ. «Վիէյչ գրուպ» ՍՊ և «Արխանգելսկիյ լես» ՍՊ ընկերություններին (համատեղ գործունեության պայմանագիր) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնել է ընթացակարգ՝ Բողոքներ քննող անձին ներկայացնելով համապատասխան հիմքեր:

2. <u>ՀՀ պաշտպանության նախարարության ներկայացրած փաստերը և դիրքորոշումը</u>.

ՀՀ պաշտպանության նախարարությունը 15.05.2019թ. թիվ ՊՆ/02/549-2019 գրությամբ դիմել է ՀՀ ֆինանսների նախարարությանը՝ հայտնելով հետևյալը.

«Հայտնում եմ, որ «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-1/3» ծածկագրով ընթացակարգի գնահատման արդյունքում 1-ին չափաբաժնում 1-ին տեղ զբաղեցնող է ճանաչվել «Վիէյչ գրուպ» ՍՊԸ-ն (համատեղ գործունեության պայմանագրով «Արխանգելսկիյ լես» ՍՊԸ-ի հետ) և վերջինիս ծանուցվել է ներկայացնելու ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետև Կարգ) 43-րդ կետի 4-րդ ենթակետով նախատեսված որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը:

Սակայն «Վիէյչ գրուպ» ՍՊԸ-ի կողմից սահմանված ժամկետում որակավորման պահանջներին համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերը ներկայացվել են թերի, մասնավորապես՝

- 1-ին տեղ զբաղեցրած մասնակիցը պարտավոր է հրավերով սահմանված կարգով և ժամկետում a.baghramyan@mil.am էլեկտրոնային փոստին ներկայացնել (ուղարկել) հրավերի 2-րդ մասի՝ ընթացակարգի հայտը պատրաստելու հրահանգի 3-րդ կետով նախատեսված փաստաթղթերը՝ 6-րդ հավելվածով նախատեսված գրությունը, որին կցվում են՝

1) իր կողմից հաստատված՝ առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը՝ համաձայն հավելված N 6.1-ի.

2) հայտը ներկայացնելու տարվա և դրան նախորդող երեք տարվա ընթացքում, պատշաճ ձևով իրականացրած համանման (նմանատիպ) առնվազն մեկ պայմանագրի և դրա հաշիվ ապրանքագրերի պատճենները, ինչպես նաև այդ պայմանագրի

(պայմանագրերի) սահմանված ժամկետում կատարումը հավաստող ակտի (հանձման-ընդունման արձանագրություն և այլն) պատճենները կամ տվյալ պայմանագրի կատարումն ընդունած կողմի գրավոր հավաստման բնօրինակից արտատպված (սկանավորված) տարբերակը:

Սակայն վերջինիս կողմից ներկայացվել է միայն Հավելված 6-ը և Հավելված 6.1-ը:.

Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2011թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 47-րդ կետը (այսուհետև՝ Կարգ)՝ գնահատող հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցրել է նիստը և առաջարկել է մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել վերը նշված անհամապատասխանությունները:

Սահմանված ժամկետում «Վիէյչ գրուպ» ՍՊԸ-ն ներկայացրեց որակավորման պահանջներին համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերի շտկված տարբերակները, որոնց հետազոտման արդյունքում պարզ դարձավ որ մասնակիցը որպես նմանատիպ պայմանագիր ներկայացրել է տախտակի և գերանի (брус) մատակարարման պայմանագրեր, ինչի հետ կապված սույն ընթացակարգի շրջանակներում նախքան հայտերի բացումը այլ մասնակցի կողմից ներկայացվել էր պարզաբանում կապված տախտակի մատակարարման վերաբերյալ և ինչի կապակցությամբ գնահատող հանձնաժողովը արդեն իսկ ուներ հրապարակված պարզաբանում armeps.am համակարգով, համաձայն որի տախտակի մատակարարումը չի հանդիսանում նմանատիպ պայմանագիր:

Քանի որ մասնակցից Կարգի 47-րդ կետի համաձայն արդեն իսկ պահանջվել էր որակավորման փաստաթղթերի շտկում, գնահատող հանձնաժողովը հիմք ընդունելով Կարգի 48-րդ կետի 2-րդ մասի պահանջները և հանձնաժողովի անդամների կողմից ներկայացված գնահատման թերթիկները որոշեց «Վիէյչ գրուպ» ՍՊԸ-ի (համատեղ գործունեության պայմանագրով «Արխանգելսկիյ լես» ՍՊԸ-ի հետ) որակավորման հատկանիշները «Մասնագիտական փորձառություն» չափորոշիչի մասով գնահատել անհամապատասխան «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-4/4» ծածկագրով ընթացակարգի հրավերի պահանջներին և մերժել վերջինիս հայտը:»:

Ելնելով վերոգրյալներից ներկայացրել են «Վիէյչ գրուպ» ՍՊԸ-ի և «Արխանգելսկիյ լես» ՍՊԸ-ի վերաբերյալ անհրաժեշտ տվյալները՝ գնման գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու գործընթաց նախաձեռնելու նպատակով:

3. <u>«Վիէյչ գրուպ» ՍՊ և «Արխանգելսկիյ լես» ՍՊ ընկերությունների ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>

Բողոքներ քննող անձը 21.05.2019թ. գրությամբ դիմել է «Վիէյչ գրուպ» ՍՊ և «Արխանգելսկիյ լես» ՍՊ ընկերություններին՝ հնարավորություն տալով ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 17.05.2019թ. թիվ 26/26-1/8191-2019 գրությամբ նախաձեռնված ընթացակարգի վերաբերյալ ներկայացնել Մասնակցի գրավոր կարծիքը:

Մասնակիցը Բողոքներ քննող անձին ներկայացված գրությամբ հայտնել է, որ.

«Ընթացակարգի հարուցման հիմք է հանդիսացել ՀՀ ֆինանսների նախարարության գրությունը ՀՀ պաշտպանության նախարարության «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-4/4» ծածկագրով ընթացակարգի (հետայսու՝ Ընթացակարգ) հրավերով պահանջվող որակավորման պահանջներին համապատասխանությունը հիմնավորող ներկայացված փաստաթղթերի ոչ համապատասխան լինելու պատճառաբանությունը, որոնց վերաբերյալ պատվիրատուն արձանագրել է թիվ 5 արձանագրությամբ:

Հայտնում ենք, որ Ընթացակարգի թիվ 5 արձանագրությունը 15 մայիսի 2019 թվականին բողոքարկվել է գնումների հետ կապված բողոքներ քննող անձին և 14 հունիսի 2019 թվականի որոշմամբ բողոքը բավարարվել է, արձանագրելով պատվիրատուի ոչ իրավաչափ գործողությունները, մասնակցի կողմից ներկայացված փաստաթղթերի համապատասխանությունը «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-4/4» ծածկագրով ընթացակարգի պահանջներին և գնահատող հանձնաժողովին պարտավորեցրել է դադարեցնել «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-4/4» ծածկագրով ընթացակարգի թիվ 5 արձանագրությամբ «Վիէյչ գրուպ» ՍՊ ընկերության (համատեղ գործունեության պայմանագրով «Արխանգելսկիյ լես» ՍՊ ընկերության հետ) հայտը մերժելու և մերժված չափաբաժնի մասով 1-ին տեղը զբաղեցնող «Յունիք Լայն» ՍՊ ընկեյությանը որակավորման փաստաթղթերը ներկայացնելու պահանջի մասով կայացված 07.05.2019թ. որոշումը:»:

Հիմք ընդունելով վերոշարադրյալը և նկատի ունենալով, որ ՍՑ-ԼՕ-2019/44 ընթացակարգը հարուցվել է «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ- Գ2ՍՊՁԲ-4/4» ծածկագրով ընթացակարգի առնչությամբ, ինչպես նաև հիմք ընդունելով ԳԲՔԱ-ՆԳ-2019/27 բողոքի քննության արդյունքում 14.06.2019 թվականին կայացված որոշումը, Բողոքներ քննող անձին խնդրել են՝ ՀՀ ֆինանսների նախարարության նախաձեռնած ընթացակարգը մերժել:

4. <u>ՍՑ-ԼՕ-2019/44 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

Սույն գործի փաստերի համաձայն՝

ՀՀ պաշտպանության նախարարության (այսուհետ նաև՝ Պատվիրատու) կողմից փայտե արկղերի ձեռքբերման նպատակով հայտարարվել է « ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-4/4» ծածկագրով ընթացակարգ (այսուհետ նաև՝ Ընթացակարգ):

Ընթացակարգի շրջանակում, ի թիվս այլ մասնակիցների հայտ է ներկայացրել նաև «Վիէյչ գրուպ» ՍՊԸ-ն (համատեղ գործունեության պայմանագրով «Արխանգելսկիյ լես» ՍՊԸ-ի հետ):

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 11.04.2019թ. թիվ 4 արձանագրության համաձայն՝ 1-ին չափաբաժնով առաջին տեղ զբաղեցնող մասնակից է ճանաչվել նշված ընկերությունը և վերջինիս ծանուցվել է ներկայացնելու ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետև Կարգ) 43-րդ կետի 4-րդ ենթակետով նախատեսված որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը:

«Վիէյչ գրուպ» ՍՊԸ-ի կողմից սահմանված ժամկետում որակավորման պահանջներին համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերը ներկայացվել են թերի, մասնավորապես՝

- 1-ին տեղ զբաղեցրած մասնակիցը պարտավոր է հրավերով սահմանված կարգով և ժամկետում a.baghramyan@mil.am էլեկտրոնային փոստին ներկայացնել (ուղարկել) հրավերի 2-րդ մասի՝ ընթացակարգի հայտը պատրաստելու հրահանգի 3-րդ կետով նախատեսված փաստաթղթերը՝ 6-րդ հավելվածով նախատեսված գրությունը, որին կցվում են՝

1) իր կողմից հաստատված՝ առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը՝ համաձայն հավելված N 6.1-ի.

2) հայտը ներկայացնելու տարվա և դրան նախորդող երեք տարվա ընթացքում, պատշաճ ձևով իրականացրած համանման (նմանատիպ) առնվազն մեկ պայմանագրի և դրա հաշիվ ապրանքագրերի պատճենները, ինչպես նաև այդ պայմանագրի (պայմանագրերի) սահմանված ժամկետում կատարումը հավաստող ակտի (հանձման-ընդունման արձանագրություն և այլն) պատճենները կամ տվյալ պայմանագրի կատարումն ընդունած կողմի գրավոր հավաստման բնօրինակից արտատպված (սկանավորված) տարբերակը:

Վերջինիս կողմից ներկայացվել է միայն Հավելված 6-ը և Հավելված 6.1-ը:.

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 30.04.2019թ. թիվ 5 արձանագրությամբ, հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2011թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 47-րդ կետը, որոշել է մեկ աշխատանքային օրով կասեցնել նիստը և առաջարկել Մասնակցին մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել վերը նշված անհամապատասխանությունները:

Սահմանված ժամկետում «ՎԻԷյչ գրուպ» ՍՊԸ-ն ներկայացրել է որակավորման պահանջներին համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերի շտկված տարբերակները, որոնց հետազոտման արդյունքում պարզ է դառել, որ մասնակիցը որպես նմանատիպ պայմանագիր ներկայացրել է տախտակի և գերանի (брус) մատակարարման պայմանագրեր:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը՝ 07.05.2019թ.-ին շարունակելով աշխատանքները՝ որոշել է մերժել է վերոհիշյալ ընկերության հայտը:

Համաձայն Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 30.04.2019թ. թիվ 5 արձանագրության՝ սույն ընթացակարգի շրջանակներում նախքան հայտերի բացումը այլ մասնակցի կողմից ներկայացվել է պարզաբանում, կապված տախտակի մատակարարման վերաբերյալ, և ինչի կապակցությամբ գնահատող հանձնաժողովը armeps.am համակարգով, արդեն իսկ, տվել է պարզաբանում, համաձայն որի՝ տախտակի մատակարարումը չի հանդիսանում նմանատիպ պայմանագիր:

5. <u>Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը</u>.

Բողոքներ քննող անձը լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի հետազոտելով և գնահատելով սույն գործում առկա ապացույցները, և համադրելով դրանք գործով պարզված փաստական հանգամանքների հետ, հանգում է այն եզրակցությանը, որ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 17.05.2019թ. թիվ 26/26-1/8191-2019 գրությամբ «Կամրջային երկաթբետոնե կոնստրուկցիաների գործարան» ՓԲԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը ենթակա է մերժման, հետևյալ պատճառաբանությամբ.

Այսպես՝

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ մասնակիցը պետք է բավարարի հրավերով սահմանված որակավորման չափանիշներին: Մասնակիցը պետք է ունենա պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման համար հրավերով պահանջվող՝

1) մասնագիտական գործունեության համապատասխանություն պայմանագրով նախատեսված գործունեությանը.

2) մասնագիտական փորձառություն.

3) տեխնիկական միջոցներ.

4) ֆինանսական միջոցներ:

5) աշխատանքային ռեսուրսներ:

Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 43-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման նիստի ավարտից հետո ոչ ուշ քան հաջորդող աշխատանքային օրը հանձնաժողովի քարտուղարը էլեկտրոնային փոստի միջոցով ծանուցում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով ծանուցումն ուղարկելու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը, բացառությամբ սույն կարգով նախատեսված դեպքերի, ապրանքների գնման դեպքում նաև սույն կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերությամբ նախատեսված փաստաթուղթը, իսկ բանկային երաշխիքի ձևով ներկայացված հայտի ապահովման բնօրինակը՝ կից գրությամբ: Սույն մասով սահմանված ժամկետում փաստաթղթեր ընդհանրապես չներկայացվելու դեպքում հանձնաժողովը հայտերի գնահատման նիստում մերժում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցի հայտը և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացնում հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին:

Կարգի 46-րդ կետի համաձայն՝ սույն կարգի 43-րդ կետի 4-րդ ենթակետով նախատեսված ժամկետի ավարտին հաջորդող աշխատանքային օրը քարտուղարն էլեկտրոնային եղանակով հանձնաժողովի անդամներին միաժամանակ տրամադրում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցի կողմից ներկայացված փաստաթղթերի պատճենները, գնահատման թերթիկների երկուական օրինակ և կոմիտեից ստացված տեղեկատվությունը: Հայտերի գնահատման արդյունքների հաստատման նիստը հրավիրվում է ոչ ուշ, քան փաստաթղթերը հանձնաժողովի անդամներին տրամադրվելուն հաջորդող երրորդ աշխատանքային օրը: Ընդ որում, ապրանքների գնման դեպքում

հանձնաժողովը գնահատում է նաև ներկայացված տեխնիկական բնութագրերի համապատասխանությունը հրավերի պահանջներին, իսկ անհամապատասխանություն արձանագրելու դեպքում հանձնաժողովի նիստի արձանագրության մեջ մանրամասն նկարագրվում են հայտնաբերված անհամապատասխանությունները:

Կարգի 47-րդ կետի համաձայն՝ առաջին տեղն զբաղեցրած մասնակցի կողմից փաստաթղթերն ամբողջական չներկայացվելու, ինչպես նաև ներկայացված՝ ներառյալ կոմիտեի կողմից տրամադրված որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերի, իսկ ապրանքների գնման դեպքում նաև սույն կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերությամբ նախատեսված փաստաթղթի գնահատման արդյունքում հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանություններ արձանագրվելու դեպքում հանձնաժողովի քարտուղարը նույն օրն էլեկտրոնային եղանակով ծանուցում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունը…:

Կարգի 48-րդ կետի համաձայն՝ առաջին տեղն զբաղեցրած մասնակցի կողմից արձանագրված անհամապատասխանությունը սահմանված ժամկետում՝

1) շտկելու դեպքում հայտը գնահատվում է բավարար և առաջին տեղն զբաղեցրած մասնակիցը հայտարարվում է ընտրված մասնակից.

2) չշտկելու դեպքում հանձնաժողովի որոշմամբ հայտը մերժվում է, և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացվում հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին:

Վերոնշյալ իրավակարգավորումների վերլուծության արդյունքում, Բողոքներ քննող անձը հանգում է այն հետևության, որ մասնակիցը պետք է բավարարի հրավերով սահմանված որակավորման չափանիշներին՝ ունանալով պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման համար հրավերով պահանջվող մասնագիտական գործունեության համապատասխանություն պայմանագրով նախատեսված գործունեությանը, մասնագիտական փորձառություն, տեխնիկական միջոցներ, ֆինանսական միջոցներ, աշխատանքային ռեսուրսներ, որոնց առկայության (համապատասխանության) դեպքում է հնարավոր հայտը գնահատել հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

Այն դեպքում, երբ հայտերի բացման նիստի ավարտից հետո էլեկտրոնային փոստի միջոցով ծանուցված առաջին տեղն զբաղեցրած մասնակցի ներկայացրած որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը ներկայացվել են ոչ ամբողջական կամ դրանց գնահատման արդյունքում հրավերի պահանջների նկատմամբ

արձանագրվել են անհամապատասխանություններ, ապա հանձնաժողովի քարտուղարը կրկին անգամ էլեկտրոնային եղանակով ծանուցում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունը:

Արձանագրված անհամապատասխանությունը սահմանված ժամկետում՝

1) շտկելու դեպքում հայտը գնահատվում է բավարար և առաջին տեղն զբաղեցրած մասնակիցը հայտարարվում է ընտրված մասնակից.

2) չշտկելու դեպքում հանձնաժողովի որոշմամբ հայտը մերժվում է, և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացվում հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին:

Կարգի 61-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն՝ մասնակիցների՝ օրենքի 6-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով նախատեսված՝ «Մասնագիտական փորձառություն» չափանիշը գնահատվում է հետևյալ կարգով՝

1) հրավերով պահանջվում է, որ մասնակիցը հայտով ներկայացնում է հայտարարություն, որ հայտը ներկայացնելու տարվա և դրան նախորդող երեք տարվա ընթացքում պատշաճ ձևով իրականացրել է համանման (նմանատիպ) առնվազն մեկ պայմանագիր: Նախկինում կատարված պայմանագիրը (կամ պայմանագրերը) գնահատվում է (կամ գնահատվում են) նմանատիպ, եթե դրա (դրանց) շրջանակներում մատակարարված ապրանքների, մատուցված ծառայությունների և կատարված աշխատանքների ծավալը (կամ հանրագումարային ծավալը)՝ գումարային արտահայտությամբ, պակաս չէ տվյալ գնման ընթացակարգի շրջանակներում մասնակցի ներկայացրած գնային առաջարկի հիսուն տոկոսից, որից առնվազն մեկ պայմանագրի շրջանակներում մատակարարված ապրանքների, մատուցված ծառայությունների և կատարված աշխատանքների ծավալը գումարային արտահայտությամբ, պակաս չէ տվյալ գնման ընթացակարգի շրջանակներում մասնակցի ներկայացրած գնային առաջարկի քսան տոկոսից.

Հրավերի 2.5 կետի համաձայն.

«Մասնագիտական փորձառություն» որակավորման չափանիշը սահմանվում և գնահատվում է հետևյալ կարգով՝

ա. մասնակիցը պետք է հայտը ներկայացնելու տարվա և դրան նախորդող երեք տարվա ընթացքում պատշաճ ձևով իրականացրած լինի նմանատիպ առնվազն մեկ պայմանագիր: Նախկինում կատարված պայմանագիրը (կամ պայմանագրերը) գնահատվում է (կամ գնահատվում են) նմանատիպ, եթե դրա (դրանց) շրջանակներում մատակարարված ապրանքների ծավալը (կամ հանրագումարային ծավալը)՝ գումարային

արտահայտությամբ, պակաս չէ տվյալ սույն ընթացակարգի շրջանակում մասնակցի ներկայացրած գնային առաջարկի հիսուն տոկոսից: Ընդ որում առնվազն մեկ պայմանագրի շրջանակում մատակարարված ապրանքների ծավալը գումարային արտահայ¬տությամբ պետք է պակաս չլինի սույն ընթացակարգի շրջանակում մասնակցի ներկայացրած գնային առաջարկի քսան տոկոսից:

Սույն ընթացակարգի իմաստով նմանատիպ են համարվում փայտե արկղերի և/կամ փայտյա այլ արտադրանքների մատակարարման պայմանագրերը:

բ. սույն ենթակետի ա) պարբերությամբ նախատեսված պահանջներին իր համապատասխանությունը հիմնավորելու համար մասնակիցը հայտով ներկայացնում է իր կողմից հաստատված հայտարարություն, պայմանով, որ առաջին տեղը զբաղեցրած մասնակից ճանաչվելու դեպքում սույն հրավերով սահմանված կարգով և ժամկետներում հանձնաժողովին կներկայացնի նախկինում կատարած պայմանագրի (պայմանագրերի) և դրա հաշիվ ապրանքագրերի պատճենները, իսկ այդ պայմանագրի (պայմանագրերի) պատշաճ կատարումը գնահատելու համար՝ տվյալ պայմանագրի կողմերի հաստատած՝ պայմանագրի սահմանված ժամկետում կատարումը հավաստող ակտի (հանձման-ընդունման արձանագրություն և այլն) պատճենը կամ տվյալ պայմանագրի կատարումն ընդունած կողմի գրավոր հավաստումը:

գ. մասնակցի որակավորումը այս չափանիշի գծով գնահատվում է բավարար, եթե վերջինս ապահովում է սույն ենթակետով նախատեսված պայմաններն ու պահանջները:

Վերոնշյալ նորմերի համակարգված վերլուծության արդյունքում, Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ մասնակիցների «Մասնագիտական փորձառություն» չափանիշը գնահատելու համար մասնակիցը հայտով ներկայացնում է հայտարարություն, որ հայտը ներկայացնելու տարվա և դրան նախորդող երեք տարվա ընթացքում պատշաճ ձևով իրականացրել է համանման (նմանատիպ) առնվազն մեկ պայմանագիր:

Ընդ որում նախկինում կատարված պայմանագիրը գնահատվում է նմանատիպ, եթե դրա շրջանակներում մատակարարված ապրանքների, մատուցված ծառայությունների և կատարված աշխատանքների ծավալը՝ գումարային արտահայտությամբ, պակաս չէ տվյալ գնման ընթացակարգի շրջանակներում մասնակցի ներկայացրած գնային առաջարկի հիսուն տոկոսից:

Բողոքներ քննող անձը հարկ է համարում նշել, որ Կարգի 61-րդ կետի դիսպոզիցիայից (բովանդակությունից) ուղղակի հետևում է, որ «նմանատիպ պայմանագիր» եզրույթն իրենից ներկայացնում է երեք կարևոր միաժամանակյա վավերապայմանների առկայություն, դրանք են՝

1. Պայմանագիրը պետք է կատարված լինի հայտը ներկայացնելու տարվա և դրան նախորդող երեք տարվա ընթացքում,

2. Պետք է կատարված լինի պատշաճ ձևով,

3. Գումարային արտահայտությամբ, չպետք է պակաս լինի տվյալ գնման ընթացակարգի շրջանակներում մասնակցի ներկայացրած գնային առաջարկի հիսուն տոկոսից և առնվազն մեկ պայմանագրի շրջանակներում մատակարարված ապրանքների, մատուցված ծառայությունների և կատարված աշխատանքների ծավալը գումարային արտահայտությամբ, չպետք է պակաս լինի տվյալ գնման ընթացակարգի շրջանակներում մասնակցի ներկայացրած գնային առաջարկի քսան տոկոսից:

Էդուարդ Բագրատի Աղայանի խմբագրությամբ «Արդի հայերենի բացատրական բառարան»-ի համաձայն՝ «տախտակ» բառի բացատրությունը տրվել է հետևյալ կերպ՝ *«1. փայտի տափակ երկարավուն ոչ հաստ շերտ, որ սղոցելով կտրում են գերանից, 2. որևէ կարծր նյութից (մետաղից, փայտից, քարից, աղյուսից և այլն) պատրաստված քառանկյունի հարթ ու տափարակ սալ՝ շերտ (գրելու, նկարելու, վրան բան ամրացնելու և այլնի համար)»:*

Սույն գործի փաստերի հիման վրա, Բողոքներ քննող անձը փաստում է, որ Մասնակցի՝ որպես նմանատիպ պայմանագիր ներկայացրած տախտակի և գերանի (ճրաչ) մատակարարման պայմանագրերը պետք է դիտարկել որպես ընթացակարգի իմաստով նմանատիպ համարվող փայտյա այլ արտադրանք:

Այսպիսով, վերոհիշյալ փաստական հանգամանքների և իրավական նորմերի լույսի ներքո, դրանց համակարգված վերլուծության արդյունքում Բողոքներ քննող անձը հանգում է այն եզրակացության, որ «Վիէյչ գրուպ» ՍՊԸ-ն, չի խախտել գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որն էլ կհանգեցներ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասով, 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը

Ո Ր Ո Շ Ե Ց

ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 17.05.2019թ. թիվ 26/26-1/8191-2019 գրությամբ «Վիէյչ գրուպ» ՍՊ և «Արխանգելսկիյ լես» ՍՊ ընկերություններին (համատեղ գործունեության պայմանագիր) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ գնումների հետ կապված
բողոքներ քննող անձ՝ **ԼԵՎՈՆ ՕՀԱՆՅԱՆ**